ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԱԱ/678

«25» 02 2021թ.

«Մեդիփլաս» ՍՊԸ-ի տնօրեն
Ջ. Թալեբի Ծոմարեին
ք.Երևան՝ Արաբկիր 33փ. Տ.17/5
էլ. հասցեն՝ mediplusco.info@gmail.com
ՀՎՀՀ 00210791

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեդիփլաս» ՍՊԸ-ի միջև 29.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

| Ապրանքի անվանում | Չ/մ | Քանակ | Մատակարարման ժամանակացույց՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. | Չմատակարարված քանակ |
|---|---|---|---|---|
| Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ 26 Fr | հատ | 50 | 50 | 50 |
| Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 20 Fr | հատ | 20 | 20 | 20 |
| Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 22 Fr | հատ | 20 | 20 | 20 |
| Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 24 Fr | հատ | 10 | 10 | 10 |
| Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 14Fr | լրակազմ | 20 | 20 | 20 |
| Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 16Fr | լրակազմ | 30 | 30 | 30 |

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Մեդիփլաս» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել *47,838 (քառասունյոթ հազար ութ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ*՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար *222,500 (երկու հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ*, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և *2,225,000 (երկու միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար)* ՀՀ դրամ որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ